

նանք երեւակայել զայն՝ սովորականէն մեծ սափոր մը, հաւանօրէն մետաղեայ՝ յարմար հեռաւոր անփնաս տեղափոխութեանց: Ձրոյ այս անօթը հարկաւ գինւոյ ալ կը ծառայէր մի եւ նոյն նպատակաւ:

Սափոր: Ս. Գրոց մէջ կը զուգադրի յունարէն զանազան բառերու<sup>1</sup>. եւ աւելի ստէպ *ὑδρίαι*<sup>2</sup>, որ իսկապէս քակոյկն է՝ ինչպէս պիտի տեսնենք (աստ, Գ, 4, Բ). մինչդեռ սափորն համազօր է *ἀμφορεύς* ին, եւ հայ կոչմանց տարբերութիւնն իսկ կը պահանջէ որ այդպէս լինի: Ըստ արեւմտեան հին ձեւերու՝ սափորի փորն աւելի ամփոփ է քան թակուկին, պարանոցը նեղ, երկու մանեկանման կանթեր, եւ պատուանդանաւոր կամ սեպածեւ ստորոտով (Դար. Ա, 248). մինչդեռ ասորական օրինակի մը մէջ ձուածեւ է, աւելի լայն պարանոցով, եւ երկու նոյնպիսի կանթերով (Վիգ. Ա, 521): — «Խեցեղին սափոր» կը կոչէ Եղիշէ (195), ցուցնելով անոր սովորական նիւթը. եւ այս պատճառաւ ալ զիւրաբեկ էր նաեւ Հրէից քով (Դատ.

1. ԵԼԲ, ԽԶ, 33. Թագ. Ա, Ա, 24. Գ, Ե, 11. Է, 38. Ես. Ե, 10. Եզեկ. ԽԵ, 14 (կրկին). եօթ տարբեր բառեր.

2. Մննդ. ԻԳ, 16. հւն. Դատ. Է, 16. Թագ. Գ, ԺԷ, 12. ԺԸ, 34.